ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2024 թվականի N 3029-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի նոյեմբերի 25-ի զեկուցագրով «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված փաստերը և պահանջը.

1.Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 2024 թվականի նոյեմբերի 25-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

Մեծամորի համայնքապետարանի և «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի միջև 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 22-ի ստացվել է գրություն, համաձայն, որի ընկերությունը ի վիճակի չէ իրականացնել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ֆինանսական խնդիրների պատճառով և խնդրում է լուծարել Պայմանագիրը:

Մեծամոր համայնքապետարանի կողմից 2024 թվականին հոկտեմբերի 31-ին Պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է և այդ մասին պատշաճ կերպով 2024 թվականին հոկտեմբերի 31-ին ծանուցվել է «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին՝ առաջարկելով Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի համաձայն կատարել վճարումներ,

մասնավորապես՝ ապահովել որակավորման ապահովման մասով 178,979.00 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով ՝ 119,319.00(մեկ հարյուր տասնինը հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով գումարների վճարումը ՝ Մեծամորի համայնքապետարանի հաշվեհամարին : Սակայն 2024 թվականի նոյեմբերի 14-ին «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայատանյան մասնաճյուղին սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-կողմից Մեծամորի համայնքապետարանին հասցեագրված գրությամբ տեղեկացվել է,որ «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի «Արդշինբանկ ՓԲԸ-ում սպասարկվող հաշվին առկա միջոցները բավարար չեն ապահովելու ներկայացված վճարման պահանջագրերի կատարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, պատասխանատու ստորաբաժանման կողմից առաջարկվել է «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 22-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Կեսարիա բնակավայրի մշակույթի տան շենքի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը:

2. 2024 թվականի հոկտեմբերի 22-ին «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից Մեծամորի համայնքապետարան ներկայացվել է գրություն, համաձայն որի ընկերությունը ի վիճակի չի իրականացնել պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ֆինանսական խնդիրների պատճառով և խնդրում է լուծարել Պայմանագիրը:

3. Մեծամորի համայնքապետարանի կողմից 2024 թվականին հոկտեմբերի 31-ին Պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է և այդ մասին պատշաճ կերպով 2024 թվականի հոկտեմբերի 31-ին ծանուցվել է «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին՝ առաջարկելով Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի համաձայն կատարել վճարումներ, մասնավորապես՝ ապահովել որակավորման ապահովման մասով 178,979.00(մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 119,319.00 (մեկ հարյուր տասնինը հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով գումարի վճարումը Մեծամորի համայնքապետարանի հաշվեհամարին:

4. 2024 թվականի Նոյմեբերի 14-ին «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից Մեծամորի համայնքապետարան գրություն է ստացվել, առ այն, որ «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում սպասարկվող հաշվին առկա միջոցները բավարար չեն ապահովելու ներկայացված վճարման պահանջագրերի կատարումը:

5. Որոշում է կայացվել «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Մեծամորի համայնքի ղեկավարին:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանս (այսուհետ նաև՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում ենք հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի,պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից :

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցները ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին նեռարում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման

բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացված է բանկային երաշխիքի ձևով , ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինիս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կքնելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով ՝

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 22-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Կեսարիա բնակավայրի մշակույթի տան շենքի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24-107 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացվել է մասնակցության հայտ:

«Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը ճանաչվել է, որպես ընտրված (հաղթող) մասնակից:

Մեծամորի համայնքապետարանի և «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի միջև 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 ծածկագրով պայմանագիրը:

2024 թվականի հոկտեմբերի 22-ին «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից Մեծամորի համայնքապետարան ներկայացվել է գրություն, համաձայն որի ընկերությունը ի վիճակի չի իրականացնել պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ֆինանսական խնդիրների պատճառով և խնդրում է լուծարել պայմանագիրը:

Մեծամոր համայնքապետարանի կողմից 2024 թվականին հոկտեմբերի 31-ին ծանուցվել է «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին՝ առաջարկելով Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի

համաձայն կատարել վճարումներ, մասնավորապես ապահովել որակավորման ապահովման մասով 178,979.00 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 119,319.00 (մեկ հարյուր տասնինը հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով գումարի վճարումը՝ Մեծամորի համայնքապետարանի հաշվեհամարին:

2024 թվականի նոյմեբերի 14-ին «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-Ի կողմից Մեծամորի համայնքապետարան գրություն է ստացվել, առ այն, որ «Կապիտալ գրուպ»ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում սպասարկվող հաշվին առկա միջոցները բավարար չեն ապահովելու ներկայացված վճարման պահանջագրերի կատարումը:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից նախաձեռնվել է ընթացակարգ և վերոնշյալից ելնելով ձեռնարկվել են միջոցներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՈՒսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ ՝ արձանագրում եմ, որ «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-Ի Հայաստանյան մասնաճյուղը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,որը հանգեցրել է գնման գործնթացի ՝ վերոնշյալ չափաբաժինների մասով՝ տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում , քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին նեռարում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից՝ երկու տարի ժամանակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված հիմքերը՝ «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-Ի Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-Ի Հայաստանյան մասնաճյուղի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ

Ֆինանսների նախարարությանը, «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2024 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 25
ք.Մեծամոր

Հավելված 1
Մեծամոր համայնքի ղեկավարի
2024 թվականի նոյեմբերի 26-ի
թիվ 3029-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ	05549561	ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Ղարիբջանյան փողոց, 39 տուն			X	25.11.2024թ. ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/107

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան